ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/154

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2018թ. թիվ 01.1/26-3/18495-18 գրությամբ «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի 05.10.2018թ. թիվ 898 գրության հիման վրա, 14.10.2018թ. թիվ 01.1/26-3/18495-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.10.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով 27.09.2018թ.-ին ներկայացված հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացվել է ապրանքի մեկ միավորի գին, այդ իսկ պատճառով Ընկերությունը չի կարող ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և մատակարարել նշված ապրանքը:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել այն փաստը, որ Ընկերությունը առաջին անգամ է մասնակցում էլեկտրոնային գնանշման հարցմանը և «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում:

«ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 898 գրությամբ հայտնել է, որ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է գնանշման հարցման «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով հրավեր: Ընթացակարգի շրջանակներում որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ մասնակիցներին համապատասխանաբար ուղարկվել է ծանուցում՝ 03.10.2018թ.ին, համաձայն հրավերի պահանջների՝ առաջարկվում

է ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Սակայն «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն ի պատասխան ծանուցմանը հայտնել է, որ 27.09.2018թ.-ին «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթին իրենց հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացրել են ապրանքի մեկ միավորի գինը, այդ իսկ պատճառով չեն կարող տալ որակավորման չափանիշներ և մատակարարել նշված ապրանքները:

Այդ իսկ պատճառով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով պայմանավորված՝ սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/154 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/154 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1, 3, 4, 6-15, 17-19, 23, 24, 26-30, 32-36, 38-42, 44-47-րդ չափաբաժինների մասով «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին 03.10.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ՝ ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3. Ի պատասխան վերոհիշյալ ծանուցմանը՝ Ընկերությունը 04.10.2018թ. գրությամբ հայտնել է, որ 27.09.2018թ.-ին «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով 27.09.2018թ.-ին Ընկերության կողմից ներկայացված հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացվել է ապրանքի մեկ միավորի գին, այդ իսկ պատճառով Ընկերությունը չի կարող ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և մատակարարել նշված ապրանքները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության 04.10.2018թ. գրությունը և ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.10.2018թ. թիվ 01.1/26-3/18495-18 գրությունը, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի 05.10.2018թ. թիվ 898

գրությունը և կից փաստաթղթերը և «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ի 16.10.2018թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական

բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կարիքների համար շինարարական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն:

«ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1, 3, 4, 6-15, 17-19, 23, 24, 26-30, 32-36, 38-42, 44-47-րդ չափաբաժինների մասով «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին 03.10.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ՝ ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ի պատասխան վերոհիշյալ ծանուցմանը՝ Ընկերությունը 04.10.2018թ. գրությամբ հայտնել է, որ 27.09.2018թ.-ին «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով մրցույթին մասնակցելու

նպատակով 27.09.2018թ.-ին Ընկերության կողմից ներկայացված հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացվել է ապրանքի մեկ միավորի գին, այդ իսկ պատճառով Ընկերությունը չի կարող ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և մատակարարել նշված ապրանքները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության 04.10.2018թ. գրությունը և ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել*** որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ***ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:*** Սույն մասով ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով

առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: ***Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույնհրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 03.10.2018թ. Ընկերությանն ուղղված ծանուցմանն ի պատասխան՝ Ընկերությունը 04.10.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 27.09.2018թ. Ընկերության կողմից ներկայացված հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացվել է ապրանքի մեկ միավորի գին, այդ իսկ պատճառով Ընկերությունը չի կարող ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և մատակարարել նշված ապրանքները: Միաժամանակ արձանագրում եմ, որ ՍՑ-ԱՄ-2018/154 ընթացակարգի շրջանակներում «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.10.2018թ. գրությամբ հայտնել է միևնույն դիրքորոշումը: Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը***:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «գ» ենթակետերը սահմանում են, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե***

ա. խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Գտնում եմ, որ «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Միաժամանակ արձանագրում եմ, որ «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ն «ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2018թ. թիվ 01.1/26-3/18495-18 գրությամբ «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09422904) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՐՄ-ՄԱՐ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ